

Երևանի Դավիթաշենի և Ֆիզիկայի ինստիտուտի բնակելի թաղամասերի ջրամատակարարման բարելավում



Երկիր. Հայաստանի Հանրապետություն
Մարզ, քաղաք ք. Երևան
Պատվիրատու Համաշխարհային բանկ, ՀԶԲԳ,
Binnie Black & Veatch (UK)
Ժամկետները. 1999թ.

Ծառայության մոտավոր գինը

15 700 ԱՄՆ դոլար

Տեխնիկական առաջադրանք

1. Նախանախագծային ուսումնասիրություններ և մոդելավորում
2. Ջրամատակարարկան բաշխիչ ցանցի գործիքային հետազոտում և գույքագրում
3. Աշխատանքային նախագծերի մշակում



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը.

Աշխատանքները կատարվել են Binnie Black & Veatch-ի և JINJ-ի փորձագետների կողմից, որի ընթացքում.

- ✓ Ուսումնասիրվել է գործող ջրամատակարարման համակարգը: Գործիքային ուսումնասիրությունների ընթացքում կատարվել են ստորգետնյա խողովակաշարերի խորության, ուղեգծի և վիճակի հայտնաբերում (որոշում), որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 47.8կմ: Կատարվել է խողովակազծերից տեղի ունեցող հոսակորուստների որոնում:
- ✓ Դաշտային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա համակարգչային EPANET ծրագրով կատարվել է ցանցի հիդրավիկական մոդելավորում: Ուսումնասիրությունների ընթացքում կատարվել են նաև բաշխիչ ցանցի թելադրող հանգույցներում ելքերի և ճնշումների չափումներ և գրանցումներ:
- ✓ Դաշտային ուսումնասիրությունների և համակարգչային հիդրավիկական մոդելավորման փոխհամակցվածությամբ պարզաբանվել է ցանցի իրական պատկերը: Շշտվել է վերակառուցվող համակարգի հիդրավիկական մոդելը, որը հիմք է ծառայել հետագա աշխատանքային նախագծերի մշակման ընթացքում մոտեցումների հիմնավորման համար և նախագծային ուղղությունների ընտրության որոշումներում:
- ✓ Նախագծվել է երկու 10000մ³ ծավալի և երկու 3000մ³ ծավալի ՕԿՁ-ների վերականգնում:
- ✓ Նախագծվել են մոտ 7կմ երկարությամբ ջրատարներ և փողոցային ջրազծեր, ինչպես նաև ջրաչափական և ճնշման կարգավորման հանգույցներ բաշխիչ ցանցի բնորոշ կետերում:
- ✓ Մշակվել են մոտ 240 բնակելի շենքերի՝ մուտքազծերի ջրաչափական հանգույցները:
- ✓ Կազմվել են տեխնիկական մասնագրեր, ծավալների ամփոփագրեր, շին. աշխատանքների կազմակերպման նախագիծ, նախահաշիվներ: Ներկայացվել են մրցառքային փաստաթղթերի և միջազգային զնումների մասնագրերի փաթեթներ:



Աշխատանքի նպատակն է

Բարելավել թաղամասի ջրամատակարարման ցանցի անխափան աշխատանքը, բարձրացնել խմելու ջրի որակը և ապահովել բնակչության ջրապահանջը:

Իրականացնել ջրաքանակի հաշվառում, նպաստել արդյունավետ շահագործմանը:

